

- հեկի Ե⁵ աւուր չորեքշաբթի եւ Հայոց գատկի
 60 առաջի չարաթու⁶, ի մետառան ժամու Վար-
 ժապետն մեր աւանդեաց զհոգին սրբաանեալ :

- Շարագրեալս պակաս է եւ թերի .
 Միտք իմ մոլորեալ խաւարաւ ծածկի .
 Ապակին ստակ յորմէ հայէի ,
 65 Վերացեալ աչացս այլ ոչ երեւի .
 Նուաստ աշակերտացն եւ չեմ անուանի
 Ստենէ գատուցեալ մանուկ թարչամի .
 Կերակուր կարծրագոյն չէ ինձ ուտելի .
 Կաթին վառիաքիմ մօրն իմ ծնողի .
 70 Վարդապետ քաղցուն բաժակ բերկրալի .
 Աչացս լուս , սրտիս ըզձալի .
 Մարմինդ կոյս եղեալ ի շիրմի ,
 Հոգիդ դասակցեալ նախնոյն Գրիգորի :

⁵ Ապրիլ 23 :

⁶ Այսինքն 23 Ապրիլ 1606 Դշ. = 5 Մեհեկի վախ-
 ճանեցաւ Արտակոն վարդապետ յԱմբիթ :